

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի № 737-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) N 1 հավելվածում՝

ա. 28-րդ կետում «ղեկավար՝ կենտրոնի (գիտական հիմնարկության)» բառերից հետո լրացնել «, պետ՝ ֆակուլտետի» բառերը.

բ. 29-րդ կետում «խորհրդական գիտական գծով» բառերից հետո լրացնել «, պետ՝ ամբիոնի» բառերը.

գ. 30-րդ կետում «ավագ գիտնական վերլուծաբան» բառերից հետո լրացնել «, պետ՝ ցիկլի» բառերը.

դ. 31-րդ կետում «գիտնական վերլուծաբան» բառերից հետո լրացնել «, ավագ դասախոս» բառերը.

ե) 33-րդ կետում «Պետ՝ ցիկլի,» բառերը հանել.

զ) 34-րդ կետում «,ավագ դասախոս» բառերը հանել,

2) N 4 հավելվածում՝

ա. 4-րդ կետում «ղեկավար՝ կենտրոնի (գիտական հիմնարկության)» բառերից հետո լրացնել «, պետ՝ ֆակուլտետի» բառերը.

բ. 5-րդ կետում «խորհրդական գիտական գծով» բառերից հետո լրացնել «, պետ՝ ամբիոնի» բառերը.

գ. 6-րդ կետում «ավագ գիտնական վերլուծաբան» բառերից հետո լրացնել «, պետ՝ ցիկլի» բառերը.

դ. 7-րդ կետում «գիտնական վերլուծաբան» բառերից հետո լրացնել «, ավագ դասախոս» բառերը.

ե. 9-րդ կետում «Պետ՝ ցիկլի,» բառերը հանել.

զ. 10-րդ կետում «, ավագ դասախոս» բառերը հանել:

2. Սահմանել, որ՝

1) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում քաղաքացիական աշխատանք կատարող անձանց գործող պաշտոնային դրույքաչափի և լրավճարի հանրագումարը սույն որոշմամբ սահմանված՝ տվյալ քաղաքացիական աշխատանք կատարողի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափի և լրավճարի հանրագումարից բարձր լինելու դեպքում պահպանվում է քաղաքացիական աշխատանք կատարողի գործող պաշտոնային դրույքաչափի և լրավճարի հանրագումարը՝ լրավճարի չափի հաշվարկային տարբերության միջոցով.

2) սույն կետի 1-ին ենթակետի համաձայն պաշտոնային դրույքաչափի և լրավճարի հանրագումարի գործող և սույն որոշմամբ սահմանված պաշտոնային դրույքաչափի և լրավճարի հանրագումարի միջև տարբերությունը հաշվարկվում է մինչև այն պահը, երբ տվյալ քաղաքացիական աշխատանք կատարող անձի՝ սույն որոշմամբ սահմանված պաշտոնային դրույքաչափի և լրավճարի հանրագումարը կգերազանցի պաշտոնային դրույքաչափի և լրավճարի հանրագումարի պահպանված չափը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: